ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ և ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2016 թվականի մարտի 2-ի թիվ 7/4 որոշում:

Վերահսկողության նպատակը՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ “Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման” և “Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման” վարկային, ինչպես նաև «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստման համար» և “Սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնում և արձագանքում” դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով կատարված ծախսերի օրինականության և արդյունավետության ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ Վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով տրամադրված միջոցների օգտագործմանն ուղղված գործարքներ և ընթացակարգեր:

Վերահսկվող օբյեկտը՝ ՀՀ առողջապահության նախարարության “Առողջապահական ծրագրերի գրասենյակ” պետական հիմնարկ:

<u>Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը</u>՝ 2015 թ. հունվարի 1-ից 2016 թ.-ի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածը:

<u>Վերահսկողության կատարման ժամկետը</u>՝ 2016 թ. մարտի 4-ից մինչև 2016 թ. հոկտեմբերի 1-ը:

<u>Վերահսկողության մեթոդաբանությունը</u>՝ Վերահսկողության ընթացքում կիրառվել է դիտարկման և վերլուծության ձևը, ինչպես նաև համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները:

Դիտարկման փուլում կատարվել է վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքի, մրցութային գործընթացների, ըստ կատեգորիաների և ուղղությունների՝ կատարված ծախսերի, ինչպես նաև առաջադրված նպատակների իրագործման վերաբերյալ ներկայացված ֆինանսական փաստաթղթերի, հաշվետվությունների, պայմանագրերի, կատարողական ակտերի և այլ նյութերի ուսումնասիրություն: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման արդյունքները և արձանագրված փաստերը:

<u>Վերահսկողության արդյունքները</u>

Վերահսկողությամբ ընդգրկվել են ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) “Ծրագրերի իրականացման գրասենյակ” պետական հիմնարկի (այսուհետ՝ ԾԻԳ) կողմից իրականացված հետևյալ վարկային և դրամաշնորհային ծրագրերը՝

1. “Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման” վարկային ծրագիր

Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև կնքվել է թիվ 7987-AM վարկային ծրագրի համաձայնագիր: Համաձայնագիրը կնքվել է 26.01.2011 թ.-ին՝ 25.3 մլն ԱՄՆ դոլար արժեքով, որից 19.0 մլն ԱՄՆ դոլարը տրամադրում է Համաշխարհային բանկը, 6.2 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումն է, իսկ այլ աղբյուրներից ծախսերը նախատեսված են 102.5 հազ. ԱՄՆ դոլարի չափով:

Ծրագրի նպատակն է՝ ուժեղացնել առողջապահության ոլորտի ավելի արդյունավետ կառավարման, ընտանեկան բժշկության վրա հիմնված առաջնային

բժշկական օգնության մեծացման և մարզերում որոշակի առողջապահական ծառայությունների մատուցման ցանցերի թարմացմանն ուղղված Նախարարության կարողությունները՝ բնակչությանն ավելի հասանելի, որակյալ և կայուն առողջապահական ծառայությունների տրամադրման համար:

Ծրագրի իրականացման ավարտն սահմանվել է 29.02.2016 թ.-ին:

Ծրագրի իրականացման նկատմամբ նախորդ վերահսկողությամբ ընդգրկվել է մինչև 2015 թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը:

Առանձին կատեգորիաներով կատարվել են հետևյալ ծախսերը՝

հազ. դրամ

Կատեգորիան	**2016 թ.**	
	2016 թ. նախատեսված	**Ծախսված (2016 թ. հունվար-օգոստոս)**
Շինարարություն	50,717.0	45,399.3
Ապրանքների ձեռք բերում	-	-
Խորհրդատվական ծառայություններ	6,279.0	4,925.5
Այլ գործառնական ծախսեր	--	--
Ընդամենը՝ ամբողջ ծրագրով	**56,996.3**	**50,324.8**

2. “Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ ”Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում” վարկային և դրամաշնորհային ծրագրեր

“Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում” վարկային թիվ 5222-AM համաձայնագիրը կնքվել է 26.03.2013 թ.-ին՝ 43.3 մլն ԱՄՆ դոլար արժեքով, որից 35.0 մլն ԱՄՆ դոլարը տրամադրում է Համաշխարհային բանկը, 8.3 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումն է: Ծրագրի վերջնաժամկետը սահմանվել է 15.12.2019 թ.:

Վարկային ծրագրի հիմնական նպատակն է՝ բարելավել մոր և մանկան առողջության ծառայությունները՝ իրականացնելով առողջության առաջնային պահպանման մակարդակում ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում, վաղ հայտնաբերում և կառավարում, ինչպես նաև Նախարարության կողմից ընտրված հիվանդանոցների գործունեության արդյունավետության և որակի բարելավում:

Վերը նշված վարկային ծրագրի «Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման բաղադրիչին» աջակցելու նպատակով Համաշխարհային բանկի

Զարգացման միջազգային ընկերակցության կողմից տրամադրվել է նաև **“Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում” թիվ TF 014138 դրամաշնորհ,** որի իրականացման ժամանակահատվածն է 2013-2018 թթ.: Ծրագրի բյուջեն կազմում է 1,800.0 հազ. ԱՄՆ դոլար: Ծրագրի նպատակն է՝ միջոցները համանուն վարկային ծրագրի գումարների հետ համամասնորեն ուղղել սքրինինգային հետազոտությունների և կատարողականի վրա հիմնված խրախուսական ֆինանսավորմանը:

Ըստ առանձին կատեգորիաների՝ կատարվել են հետևյալ ծախսերը.

հազ. դրամ

Կատեգորիան	**2016 թ.**	
	Նախատեսված	**Ծախսված՝ 2016 թ. հունվար-օգոստոս**
Շինարարություն (վարկ)	1,394,653.0	875,191.0
Ապրանքների ձեռք բերում (դրամաշնորհ+վարկ)	2,772,088.0	3,325,828.0
Խորհրդատվական ծառայություններ (դրամաշնորհ+վարկ)	235,993.0	180,251.2
Այլ գործառնական ծախսեր (վարկ)	137,919.0	73,353.0
Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում (դրամաշնորհ+վարկ)	367,823.4	238,453.4
Ընդամենը՝ ամբողջ ծրագրով (դրամաշնորհ+վարկ)	**4,908,476.4**	**4,693,076.6**

2013-2015 թթ.-ին արդեն իսկ կատարվել են վերոնշյալ վարկային ծրագրերի տարբեր կատեգորիաներով իրականացված ծախսերի արդյունավետության և օրինականության շուրջ համապարփակ ուսումնասիրություններ, որոնք ներառել են մինչև 2015 թ.-ի դեկտեմբեր ամիսը: Տվյալ վերահսկողության արդյունքներն ամփոփվել և հաստատվել են ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից: 2016 թ.-ին վերահսկողությամբ ընդգրկվել են նախորդ ուսումնասիրություններից դուրս մնացած հարցերն, ինչպես նաև ընտրանքային կարգով վարկային միջոցների ծախսման առանձին ուղղությունները: Ելնելով նշվածից, ընտրվել է վերահսկողության՝ դիտարկման ձևը:

3. “Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված

ֆինանսավորման ծրագրի նախապատրաստման համար” թիվ TF 013103 դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրն իրականացվել է 2013 թ.-ից 2016 թ.-ի մայիս ամսվա ընթացքում: Ծրագրի բյուջեն կազմել է 400.0 հազ. ԱՄՆ դոլար: Ծրագրի նպատակը՝ “Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում” վարկային և դրամաշնորհային ծրագրերի “Առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման” բաղադրիչով նախատեսված աշխատանքների նախապատրաստման հետ կապված միջոցառումների իրականացումն է:

հազ. դրամ

Կատեգորիան	**2016 թ.**	
	Նախատեսված	**Ծախսված՝ 2016 թ. հունվար-օգոստոս**
Շինարարություն	-	-
Ապրանքների ձեռք բերում	-	-
Խորհրդատվական ծառայություններ	7,125.0	8,511.6
Այլ գործառնական ծախսեր	--	--
Ընդամենը՝ ամբողջ ծրագրով	7,125.0	8,511.6

Ծրագրով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են:

“Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման” վարկային ծրագրի “Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում՝ ԱԱՊ հիմնարկներում ՄՄԱ ծառայությունները և ՈՎՀ-ի ծառայությունները բարելավելու նպատակով” բաղադրիչ

Բաղադրիչի շրջանակներում իրականացվող աշխատանքներն ուղղվել են առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատություններում մոր և մանկան առողջության պահպանման և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծառայությունների բարելավմանը, մասնավորապես՝ ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, արդյունավետ բուժմանը և այդ հիվանդություններից մահացության կրճատման նպատակով սրտանոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի և արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգների անցկացմանը:

2016 թ.-ին ՀՀ բնակչության ռիսկային խմբերում նախատեսվել է իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների զանգվածային սքրինինգներ (զարկերակային գերճնշում և շաքարային դիաբետ՝ յուրաքանչյուրը շուրջ 226 000 հետազոտություն և արգանդի պարանոցի քաղցկեղ՝ շուրջ 105 000 ՊԱՊ հետազոտություն) և բժշկական անձնակազմի

համար՝ կատարողականի վրա հիմնված խրախուսական ֆինանսավորում, որոնց համար համամասնորեն՝ TF 014138 դրամաշնորհային ծրագրից, 2016 թ.-ի վարկից նախատեսվել է 366,014.0 հազ. դրամի ծախս:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ 01.01.2015 թ.-31.08.2016 թ. ընկած ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 797 300 հետազոտություն: Կանանց մոտ իրականացվել է 91 803 ՊԱՊ թեստի հետազոտություն, որը վկայում է նախորդ վերահսկողության ընթացքում արձանագրված՝ նախատեսված ցուցանիշների թերակատարման վերացման միտումների մասին: 282 731 քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն և 399 842 քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ: Միաժամանակ՝ իրականացվել է հղիության 36-38 շաբաթական ժամկետում 22 965 մեզի և արյան երրորդ հետազոտություն:

Կատարված հետազոտությունների և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման իրականացման համար փաստացի վճարվել է 229,085.0 հազ. դրամ: Հաշվի առնելով սքրինինգային հետազոտություններին բնակչության մասնակցության ներկա իրավիճակը՝ մինչև 2016 թ.-ի ավարտը կանխատեսվում է իրականացնել ևս շուրջ 140,000.0 հազ. դրամի չափով փոխհատուցում՝ իրականացված հետազոտությունների, խրախուսական ֆինանսավորման և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման իրականացման համար:

Հաշվի առնելով նախորդ ստուգման արդյունքում արձանագրված՝ արգանդի վզիկի քաղցկեղի հայտնաբերմանն ուղղված հետազոտության ցուցանիշների թերակատարման փաստը, ԾԻԳ-ը միջոցներ է ձեռնարկել նշված թերակատարումը վերացնելու ուղղությամբ, մասնավորապես՝ ՀՀ մարզերում հանրային քարոզարշավի իրականացման ընթացքում համապատասխան աշխատանքներ են իրականացվել հիշյալ հետազոտության խրախուսման նպատակով:

Վարկային ծրագրերի “շինարարություն” կատեգորիա

“Առողջապահական համակարգի արդիականացում լրացուցիչ ֆինանսավորման” վարկային ծրագրի շրջանակներում 2016 թ.-ի հունվար-օգոստոս ամիսներին՝ նախորդ տարիներին ծրագրի իրականացման ընթացքում տնտեսված միջոցների հաշվին, իրականացվել են ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի «Ռ. Հարությունյանի անվան

Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի լրացուցիչ շինարարական աշխատանքները: Նշված աշխատանքների իրականացման համար կազմակերպվել է գնանշման հարցման (շոփինգ) սկզբունքով մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել նվազագույն գին առաջարկած “Երևանի Ջրշին” ՓԲԸ-ն՝ 3,298.2 հազ. դրամ գումարով: Շինարարական աշխատանքներն սահմանված ծամկետներում ավարտվել են, իսկ դրանց դիմաց նախատեսված վճարումներն ամբողջությամբ կատարվել են:

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածում իրականացվել է ԾԻԳ-ի կողմից անցկացվող մրցույթների օրինականության և շինարարական աշխատանքների ընթացքի նկատմամբ ընթացիկ վերահսկողություն, որով խախտումներ չեն հայտնաբերվել:

Այսպիսով՝ ՀՀ Արարատի մարզի “Արտաշատի ԲԿ” ՓԲԸ-ի շենքերի վերանորոգման նպատակով հայտարարվել է ազգային մրցույթ, որին հայտ է ներկայացրել մեկ շինարարական կազմակերպություն:

Վերահսկողության՝ դիտարկմամբ պարզվել է, որ ԾԻԳ-ի կողմից անցկացված մրցույթի արդյունքում նվազագույն գնառաջարկ նեկայացրած և մրցութային պայմաններին բավարարող “Ագաթ 777” ՍՊԸ հետ կնքվել է պայմանագիր՝ 1,549,678.0 հազ. դրամ արժեքով: Պայմանագիրը կնքվել է 06.06.2016 թ.-ին, իսկ օգոստոս ամսվա վերջի դրությամբ “Արտաշատի ԲԿ” ՓԲԸ-ի շենքերի վերանորոգման գործընթացն իրականացվում է ժամանակացույցին համապատասխան:

ՀՀ Գեղարքունիքի մարզի “Սևանի ԲԿ” ՓԲԸ շենքի կառուցման աշխատանքների իրականացման նպատակով ևս հայտարարվել է ազգային մրցույթ, որին հայտ են ներկայացրել թվով 5 շինարարական կազմակերպություններ:

Վերահսկողության՝ դիտարկմամբ պարզվել է, որ ԾԻԳ-ի կողմից անցկացված մրցույթի արդյունքում նվազագույն գնառաջարկ ներկայացրած “Բիդեք” ՍՊԸ և “Եվրոպա” ՍՊԸ Համատեղ գործունեությամբ հանդես եկող կազմակերպությունների հետ կնքվել է պայմանագիր 885,146.0 հազ. դրամ գումարով: Պայմանագիրը կնքվել է 03.08.2016 թ.-ին, օգոստոսի վերջի դրությամբ “Սևանի ԲԿ” ՓԲԸ-ի շենքերի կառուցման գործընթացը մեկնարկել և ընթանում է ժամանակացույցին համապատասխան:

Վարկային ծրագրերի “ապրանքների ձեռք բերում” կատեգորիա

Վերահսկողությամբ ընդգրկված վերոնշյալ ծրագրերի իրականացման շուրջ 2013-2015 թթ.-ին արդեն իսկ ուսումնասիրվել են “ապրանքների ձեռք բերում” կատեգորիայով նախատեսված բժշկական սարքավորումների ու ապրանքների գնման, բաշխման, մատակարար կազմակերպությունների կողմից դրանց ներկրման արժեքների ու մատակարարման գների վերաբերյալ հարցերը և վերահսկողության արդյունքները հաստատվել են ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից:

Այդ իսկ պատճառով “ապրանքների ձեռք բերում” կատեգորիայով 2016 թ.-ին վարկային միջոցների օգտագործման նկատմամբ կիրառվել է վերահսկողության՝ դիտարկման ձևը: Ելնելով ԾԻԳ-ի ընթացիկ տարվա գնումների պլանից՝ հիմնականում նախատեսվել է ֆինանսական միջոցներն ուղղել կառուցված/կառուցվող, ինչպես նաև սքրինինգային գործընթացներում ներգրավված բժշկական կազմակերպությունները անհրաժեշտ կահույքով և բժշկական սարքավորումներով հագեցնելուն: Քանի որ “Առողջապահական համակարգի արդիականացում լրացուցիչ ֆինանսավորման” վարկային ծրագիրն ավարտվել է 2016 թ.-ի փետրվար ամսին, հետևաբար՝ նշված կատեգորիայով ծախսեր նախատեսված չեն եղել: “Ապրանքների ձեռք բերում” կատեգորիայով ծախսեր կատարվել են միայն “Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում” վարկային ծրագրի միջոցներից:

Վերոնշյալ վարկային ծրագրի շրջանակներում 2016 թ.-ին արգանդի պարանոցի նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար բժշկական և ախտորոշիչ սարքավորումներով և բժշկական կահույքով սքրինինգային գործընթացում ներգրավված Երևանի և ՀՀ մարզերի մի շարք բժշկական հաստատությունները հագեցնելու նպատակով հայտարարվել է ազգային մրցույթ՝ 2 լոտով: Մրցույթի արդյունքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ լոտ 2-ի համար (Բժշկական կահույք արգանդի պարանոցի նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար) հայտեր չեն ստացվել, այդ մասով մրցույթը համարվել է չկայացած, իսկ Լոտ 1-ի (Բժշկական և ախտորոշիչ սարքավորումներ արգանդի պարանոցի նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար) մասով պայմանագիր է կնքվել ամենացածր գնառաջարկ ներկայացրած “Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն” ՍՊԸ-ի հետ՝ 50,056.5 հազ. դրամ գումարով:

Վարկային ծրագրի շրջանակներում “Պրոֆ. Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն” ՓԲԸ-ի համար բժշկական և ախտորոշիչ սարքավորումների և բժշկական կահույքի մատակարարման, տեղադրման և ուսուցման նպատակով կազմակերպվել է մրցույթ՝ միջազգային մրցակցային սակարկության եղանակով՝ թվով 4 լոտով: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվել և պայմանագրերն են կնքվել մրցութային պայմաններին համապատասխանող՝ ամենացածր գին առաջարկած հետևյալ կազմակերպությունների հետ.

Լոտ 1՝ ախտորոշիչ սարքավորումների ձեռք բերման նպատակով պայմանագիր է կնքվել “Տելիա-Մեդ” ՓԲԸ-հետ՝ 592,718.3 հազ. դրամի չափով, Լոտ 2՝ լաբորատոր սարքավորումների ձեռք բերման նպատակով պայմանագիր է կնքվել “Կոնցեռն-Էներգոմաշ” ՓԲԸ-ի հետ՝ 285,919.0 հազ. դրամի չափով, Լոտ 3՝ վիրաբուժական և հիվանդանոցային սարքավորումների ձեռք բերման նպատակով պայմանագիր է կնքվել “Ար.Մեդտեխնիկա” ՍՊԸ-ի և “Դիասերվ” ՍՊԸ ՀՁ-ի հետ՝ 260,820.0 հազ. դրամի չափով, լոտ 4՝ բժշկական կահույքի ձեռք բերման նպատակով պայմանագիր է կնքվել “Ագաթ-777” ՍՊԸ-ի և “Մեդիմպեքս” ՍՊԸ ՀՁ-ի հետ՝ 200,302.0 հազ. դրամի չափով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լոտ 2-ի մասով հայտերի բացակայության պատճառով թիվ CR4/NCB/A-G/013-15 ազգային մրցույթը չեղյալ է համարվել (բժշկական կահույք արգանդի պարանոցի նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար), Համաշխարհային բանկի թույլտվությամբ, կատարվել է լոտ 4-ով նախատեսված ապրանքների (կահույքի) քանակների ավելացում՝ 4,821.6 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ:

Նշված պայմանագրերով նախատեսված աշխատանքները ամբողջությամբ ավարտվել են, բացառությամբ “Կոնցեռն-Էներգոմաշ” ՓԲԸ կողմից չի մատակարարվել 23,000.0 հազ. դրամ արժողությամբ հոմեոստազի էքստրակորպորալ կարգավորման համակարգի, որը ներկայում արդեն իսկ մատակարարման փուլում է: Նշված ուշացման պատճառով ընկերությունից կգանձվի տուգանք՝ պայմանագրով նախատեսված կարգով:

Վերը նշված պայմանագրերի շրջանակներում մատակարարված բոլոր ապրանքները տեղադրվել են:

Դիտարկմամբ ընդգրկվել է նաև վարկային ծրագրի շրջանակներում “Երկու բժշկական մասնաշենքերում (3-րդ և 7-րդ հարկեր) քիմիաթերապիայի և ոսկրածուծի փոխպատվաստման բաժանմունքի, արյան բանկի, GMP լաբորատորիայի, կրիո-բանկի և

դոնորների սենյակի վերջնական և ամբողջական վերանորոգման շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային և ինժեներական փաստաթղթերի մշակում, շինարարական աշխատանքների իրականացում և սարքավորումների մատակարարում ու տեղադրում” միջազգային մրցակցային սակարկության եղանակով կազմակերպված մրցույթն ու արդյունքում “Ռենկո Արմէստեյտ” ՍՊԸ, (Հայաստան) “Ակոտեկ սռլ/Acotec srl» (Իտալիա) և “Ռենկո սպա/Renco spa» (Իտալիա) համատեղ ձեռնարկության (այսուհետ՝ Համատեղ ձեռնարկություն) հետ 4,813.45հազ. Եվրո և 530,148.3 հազ. դրամ գումարով կնքված պայմանագրի իրականացման ընթացքը:

Ելնելով իրականացվող ծրագրի բացառիկությունից տարածաշրջանում՝ Համաշխարհային Բանկի առաջարկությամբ և համաձայն ընթացակարգի՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, շինարարական աշխատանքների իրականացման և սարքավորումների մատակարարման և տեղադրման նպատակով հայտարարվել է մեկ մրցույթ: Ներկայում ավարտվել են քիմիաթերապիայի և ոսկրածուծի փոխպատվաստման բաժանմունքի, արյան բանկի, GMP լաբորատորիայի, կրիո-բանկի և դոնորների սենյակի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, համաձայն պայմանագրի՝ վերանորոգման և սարքավորումներով մատակարարման աշխատանքները պետք է ավարտվեն 2017 թ.-ի հունվար ամսին, սակայն պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքներն ու ապրանքների մատակարարման գործընթացն արդեն իսկ ավարտվել են, բացառությամբ մեկ սարքի՝ հեմատոլոգիական վերլուծիչի՝ 9450 Եվրո արժողությամբ: Նշված սարքավորումն մատակարարման փուլում է:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տվյալ մրցութային ընթացակարգը թույլ չի տվել գնահատել շինարարական աշխատանքների միավոր գները, մասնավորապես՝ մրցույթին հայտատուի կողմից ներկայացվել է 3 գնառաջարկ՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, վերանորոգման աշխատանքների (որտեղ շինարարական աշխատանքների նախահաշիվը չի ներկայացվել, հետևաբար նախահաշվային միավոր գները չեն արտացոլվել) և սարքավորումների համար: Այլ կերպ՝ պայմանագրի գինը կազմել է նշված գների հանրագումարը: Արդյունքում, մրցույթի գնահատման փուլում ԾԻԳ-ը՝ հաշվի առնելով մրցութային գործընթացի առանձնահատկությունները, իրավունք չի ունեցել պահանջել շինարարական աշխատանքների միավոր գները և,

մասնավորապես, այն հանգամանքը, որ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը նախատեսվել է նույն պայմանագրով:

Միաժամանակ, Ուռուցքաբանության ազգային կենտրոնի վիճակագրական բաժանմունքի համար համակարգչային սարքավորումների մատակարարման նպատակով կատարվել է գնանշման հարցում, որին հայտ է ներկայացրել 3 կազմակերպություն:

Վերահսկողության՝ դիտարկմամբ պարզվել է, որ ԾԻԳ-ի կողմից անցկացված մրցույթի արդյունքում նվազագույն գնառաջարկ նեկայացրած և մրցութային պայմաններին բավարարող «Արտակ Տիգրանյան» ԱՁ հետ կնքվել է պայմանագիր 4,762.0 հազ. դրամ գումարով: Պայմանագիրը կնքվել է 01.03.2016 թ.-ին: Պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքները մատակարարվել են:

Խորհրդատվական ծառայություններ

“Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում” ծրագրերով 2016 թ.-ին ԾԻԳ-ի հետ կնքված պայմանագրերով խորհրդատվական ծառայություններ են մատուցել 22 անհատ և 8 կազմակերպություն: Խորհրդատվական ծառայություններ մատուցողների կազմը բաղկացած է բաղադրիչների համակարգողներին աջակցող մասնագետներից, շինարարական աշխատանքների համակարգման մասնագետներից, վարկային ծրագրի իրականացմանը և դրանց շրջանակներում կատարվող աշխատանքներին աջակցող մասնագետներից (իրավաբան-խորհրդատու, բժիշկ-փորձագետ, գնահատող աշխատանքային խմբի համար տնտեսագետ-փորձագետ), շինարարական աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպություններից:

Խորհրդատվական ծառայությունների դիտարկմամբ արձանագրվել է, որ խորհրդատուների հետ ԾԻԳ-ի կողմից կնքված պայմանագրերի բովանդակության և ամսական ներկայացվող հաշվետվությունների շուրջ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկություններն ընդունվել են և հաշվետու ժամանակաշրջանում խախտումներ չեն հայտնաբերվել:

“Սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնում և արձագանքում” դրամաշնորհային ծրագիր

ԱՄՆ-ի “Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման” կենտրոնի (CDC) աջակցությամբ իրականացվող՝ “Սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնում և արձագանքում” դրամաշնորհային ծրագրի նպատակն է՝ սեզոնային գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության համակարգի և լաբորատոր գործունեության պարբերաբար մշտադիտարկման և վերահսկման ծառայությունների ստեղծումը: Ծրագրով 2016 թ.-ին ֆինանսավորումը նախատեսվել է 300.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով:

Ծրագրի ֆինանսական կառավարիչ՝ ԾԻԳ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ 2016 թ.-ին նախատեսվել է 99,255.7 հազ. դրամի ծախս, կատարված ծախսը 2016 թ.-ի հունվար-օգոստոս ամիսներին կազմել է 48,887.7 հազ. դրամ, որից 13,825.4 հազ. դրամն ուղղվել է աշխատավարձի վճարմանը, մասնագիտական ծառայությունների համար վճարվել է 26,390.0 հազ. ՀՀ դրամ, իսկ կապի և մեքենաների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի համար՝ 937.3 հազ. դրամ, տրանսպորտային նյութերի համար՝ 1,095.0 հազ. դրամ և հիմնական միջոցների և բժշկական նյութերի ձեռք բերման նպատակով վճարվել է 6,640.0 հազ. դրամ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԾԻԳ-ի կողմից 2016 թ.-ին որոշակի միջոցներ են ձեռնարկվել «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» ծրագրի շրջանակներում առողջապահական կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման» ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացման, նախկինում արձանագրված թերակատարումները վերացնելու ուղղությամբ, որի մասին վկայում են 2016 թ.-ի հունվար-հուլիս ամիսների ընթացքում իրականացված հետազոտությունների թվաքանակի վերաբերյալ ներկայացված ցուցանիշները:
2. «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» վարկային ծրագրի շրջանակներում “Պրոֆ. Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն” ՓԲԸ-ում ծրագրով նախատեսված՝ վերջնական և ամբողջական վերանորոգման շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային և ինժեներական փաստաթղթերի մշակման, շինարարական աշխատանքների կատարման և սարքավորումների մատակարարման ու տեղադրման նպատակով՝ ելնելով ծրագրի

բացառիկությունից տարածաշրջանում, Համաշխարհային բանկի առաջարկությամբ և համաձայն ընթացակարգի՝ նշված աշխատանքների իրականացման նպատակով հայտարարվել է մեկ մրցույթ, իսկ պայմանագրի գինը ձևավորվել է այդ բաղադրիչների գների հանրագումարից: Չնայած աշխատանքները պետք է ավարտվեին 2017 թ.-ի հունվար ամսին, այդուհանդերձ, ներկայում դրանք ավարտվել են, բացառությամբ մեկ սարքի տեղադրումից՝ 9450 եվրո արժողությամբ հեմատոլոգիական վերլուծիչից, որը մատակարարման փուլում է:

3. ԾԻԳ-ի կողմից հաշվի են առնվել նախորդ վերահսկողության ընթացքում արձանագրված՝ խորհրդատուների հետ կնքվող պայմանագրերում նրանց գործառույթների, խորհրդատուների ամենամսյա հաշվետվություններում մատուցված ծառայությունների նկարագրերի հստակեցման ուղղությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ին՝

1. Շարունակել աշխատանքները ԾԻԳ-ի կողմից “Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման” վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված սքրինինգների իրականացման գործում տեղի ունեցած թերակատարման պատճառների լիովին վերացման ուղղությամբ:

2. Մշտական հսկողություն իրականացնել վարկային ծրագրերի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման շուրջ կնքվող պայմանագրերի և խորհրդատուների ամենամսյա հաշվետվությունների, այդ ծառայությունների ծավալների ծրագրավորման հետագա կատարելագործման նկատմամբ:

“Վերահսկիչ պալատի մասին” ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ հոդվածի զ) կետի համաձայն՝ մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկություն՝ հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ: